

Ն ե ր ա ծ ու թ յ ու ն

Սույն ժողովածուի նպատակը Հայաստանի Հանրապետությունում պարենային ապահովության և աղքատության վերաբերյալ ամբողջական ու համապարփակ վիճակագրական տեղեկատվության ներկայացումն է:

Պարենային ապահովության կառուցվածքային տարրերը՝ պարենի առկայությունը, հասանելիությունը, օգտագործումը, բնութագրված են մակրոտնտեսական, զբաղվածության, սոցիալական իրավիճակի, գյուղատնտեսական մթերքի արտադրության, պարենամթերքի առաջարկի և այլ ցուցանիշներով, պարենային և այլ սպառողական ապրանքների գներով, պարենային ինքնաբավության և ներմուծումից կախվածության աստիճանով, իսկ աղքատությունը՝ տնային տնտեսությունների հետազոտության (եկամուտների ու ծախսերի կառուցվածքի և այլն) արդյունքներով: